ցին։ Ի տէրութեան սորա ոմն Փիլոզոփող Առնալդ անուն՝ յանդիմանէր զանողորմ մեծատունսն և զկարգաւորսն. զոր նախանձեալ ետուն կախել զնա 'ի փղէն։ Յաւուրս սորա կոտորեցան զօրքն Սալահատինին՝ մերձ Երուսաղէմի. և ոմն Յովհաննէս անուն մեռաւ յաշխարհն Սպանիոյ, որ ապրեալ էր ՅԿԸ. տարի։

Փարիկ առաջին սկսաւ յամի Տեառն Ա.ՃԿԳ. ինքնակալեալ ամս ԼԷ։ Սա կամեցաւ գալ 'ի Հռոմ 'ի Թագաւորել, և Հռոմայեցիք ելին պատերազմիլ ընդ նա, և զօրօք Թագաւորին կոտորեցին զՀռոմայեցիսն անխնայ, և բազում գերիս տարին. և Պապն Անդրիանոս բերեալ 'ի Հռոմ՝ Թագեաց զնա, և պատեաց զգերիսն։ Իսկ յետ մահուանն Անդրիանոսի՝ Գ. Պապ մի զկնի միոյն փոխեաց Փարիկն։ Յաւուրս սորա մեռաւ Սալահատինն, և Սէֆըտինն եղբայր նորա՝ բռնակալեաց և տիրեաց յետ նորա վատ քան զնա։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան